Գլխավոր տեղեկություն

Համար	N 1465-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (01.06.2012-06.01.2014)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2008.12.29/75(665) Հոդ.1353
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	11.12.2008
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	11.12.2008
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	08.01.2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2008 թվականի N 1465-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՎԵԼ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ) ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ) ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Վերնագիրը խմբ. 05.04.12 N 392-Ն)

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի, «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 12-րդ մասի, «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 15.1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(Նախաբանը փոփ. 05.04.12 N 392-Ն)

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քաղաքացու ցանկությամբ առավել սեղմ ժամկետներում քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրելու (փոխանակելու) համար գանձվող վճարների չափերը, գանձվող վճարների դիմաց անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրելու (փոխանակելու) ժամկետները՝ համաձայն N 1

հավելվածի:

(1-ին կետը խմբ. 05.04.12 N 392-Ն)

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի ստորաբաժանումում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համար բացել արտաբյուջետային հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող ֆինանսական մուտքերի հաշվեգրման նպատակով:

(2-րդ կետը լրաց. 05.04.12 N 392-Ն)

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 2-րդ կետով նախատեսված արտաբյուջետային հաշվի միջոցները տնօրինվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի կողմից հաստատված և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համաձայնեցված նախահաշվին համապատասխան.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է ներկայացնում սույն կետի 1-ին ենթակետում նշված արտաբյուջետային հաշվի միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության մեջ ներառելու համար:

4. Հաստատել սեղմ ժամկետներում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրելու (փոխանակելու) վճարովի ծառայության մատուցման պայմանագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

(4-րդ կետը խմբ. 05.04.12 N 392-Ն)

5. Սեղմ ժամկետներում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրելու (փոխանակելու) ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի լիազորած տարածքային անձնագրային ծառայությունների կողմից:

(5-րդ կետը խմբ. 05.04.12 N 392-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2008 թ. դեկտեմբերի 11
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՎԵԼ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ) ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

NN ը/կ	Անձնագրային գործողության տեսակը	Վճարի չափը (դրամ)
1.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու կորած անձնագրի փոխարեն նոր անձնագիր տալը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում	60000
2.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու կորած անձնագրի փոխարեն նոր անձնագիր տալը՝ 3-րդ աշխատանքային օրը	50000
3.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու կորած անձնագրի փոխարեն նոր անձնագիր տալը՝ 5-րդ աշխատանքային օրը	40000
4.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալը կամ փոխանակելը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում	20000
5.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալը կամ փոխանակելը՝ 3-րդ աշխատանքային օրը	10000
6.	Կորած նույնականացման քարտի փոխարեն նոր նույնականացման քարտ տալը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում	40000
7.	Կորած նույնականացման քարտի փոխարեն նոր	20000

	նույնականացման քարտ տալը՝ 3-րդ աշխատանքային օրը	
8.	Նույնականացման քարտ տալը կամ փոխանակելը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում	20000
9.	Նույնականացման քարտ տալը կամ փոխանակելը՝ 3-րդ աշխատանքային օրը	10000

(Հավելվածը խմբ. 14.01.10 N 21-Ն, 05.04.12 N 392-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշման

Ձև

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ (ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ) ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
(Վերնագիրը խմբ. 05.04.12 N 392-Ն)

____ _____ 200 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, այսուհետ՝ կատարող, ի դեմս _____ -ի, որը

գործում է ըստ _____ - ի, մի կողմից, և _____ը, այսուհետ՝ պատվիրատու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուին մատուցել անձնագիր կամ նույնականացման քարտ (ընդգծել) տալու կամ փոխանակելու կապակցությամբ սեղմ ժամկետում աշխատանքներ կատարելու վճարովի ծառայություն:
1.2. Ծառայությունը մատուցվում է _____ -րդ աշխատանքային օրը:
1.3. Ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուին անձնագիրը կամ նույնականացման քարտը (ընդգծել) տրամադրելու վերաբերյալ փաստաթղթի ստորագրման պահից:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել պատշաճ որակով և պայմանագրով նախատեսված ժամկետում:
2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարը:

3. Պայմանագրի գինը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է _____ դրամ, որը լրիվ

վճարված է պայմանագիրը կնքելու պահին, իսկ վճարման անդորրագիրը կցվում է:
3.2. Պայմանագրի գինը չի ներառում օրենքով սահմանված պետական տուրքի գումարը:

4. Այլ պայմաններ

4.1. Պայմանագրով նախատեսված ժամկետները խախտելու յուրաքանչյուր օրվա համար կատարողը պատվիրատուին վճարում է տուժանք՝ պայմանագրի գնի 200 տոկոսի չափով:

4.2. Եթե ծառայությունները մատուցելու համար նախատեսված ժամկետում պատվիրատուն չի ներկայանում անձնագիրը կամ նույնականացման քարտը (ընդգծել) ստանալու, ապա ծառայությունների մատուցումը համարվում է պատշաճ կատարված, և կատարողն ազատվում է սույն պայմանագրով նախատեսված տուժանքի վճարման պարտավորությունից:

4.3. Կատարողն ազատվում է սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով:

4.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեներն ու վավերապայմանները

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)

(Հավելվածը խմբ., փոփ., լրաց. 05.04.12 N 392-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար **Դ. Սարգսյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
20.07.2023, N 1241-Ն	31.07.2023, N 1465-Ն
22.09.2022, N 1466-Ն	01.12.2022, N 1465-Ն
24.12.2020, N 2150-Ն	26.12.2020, N 1465-Ն
23.06.2016, N 640-Ն	01.06.2017, N 1465-Ն
06.03.2014, N 209-Ն	01.09.2014, N 1465-Ն
19.12.2013, N 1466-Ն	06.01.2014, N 1465-Ն
05.04.2012, N 392-Ն	01.06.2012, N 1465-Ն
14.01.2010, N 21-Ն	06.02.2010, N 1465-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան